ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/36

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Արարատի մարզի Այնթապի համայնքապետարան
Մասնակից՝ «Գրիտիգ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցում, բանջարեղենի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-19/1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.02.2020թ. թիվ 26/26-1/20392-2019 գրությամբ «Գրիտիգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզ Այնթապի համայնքապետարանի 02.12.2019թ. թիվ 1194 գրության հիման վրա, 09.12.2019թ.-ին «Գրիտիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) թիվ 26/26-1/20392-2019 գրությամբ ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) որոշմամբ 04.02.2020թ.-ին գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2020/37 համարի ծածկագիրը՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2020թ.-ի թիվ 01.1/26-1/1314-20 և 01.1/26-1/1310-2020 գրություններով հայտնած դիրքորոշումը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2020/37 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/36 համարի ծածկագիրը և 19.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 19.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2020թ.-ին:

2. **<u>ՀՀ Արարատի մարզ Այնթապի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Արարատի մարզ Այնթապի համայնքապետարանը 02.12.2019թ. թիվ 1194 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, Այնթապի համայնքապետարանի և «Գրիտիգ» ՍՊԸ-ի միջև 16 օգոստոսի 2019թ. N «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով պայմանագրի պետք էր

իրականացներ ՀՀ Արարատի մարզի Այնթապ համայնքի մշակույթի տան կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը:

Համաձայն պայմանագրի Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բևռութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, սակայն, «Գրիտիգ» ՍՊԸ-ին «Արտ Պլաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 02 հոկտեմբերի 2019 թվականի N 1 կատարողականի ակտը ստուգելու համար Այնթապի համայնքապետարանը սույն թվականի հոկտեմբերի 8-ի Այնթապ համայնքի ղեկավարի N 36 կարգադրության հիման վրա ստեղծել է հանձնաժողով, որով ստուգվել է Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքների թիվ 1 կատարողական ակտի աշխատանքների որակը:

Ստուգման ընթացքում հայնտաբերվել են, մի շարք բացթողումներ և խախտումներ, որը արձանագրվել է հանձնաժողովի անդամների և մասնակիցների կողմից:

Հայտնաբերվել են հետևյալ խախտումները՝

1. Նախատեսվել է հատակի խարամաբետոնն շերտի կառուցում 50 մմ հաստությամբ, սակայն ստուգման ընթացքում պարզվել է, որ տեղում առկա չէ, խարամաբետոնե շերտի կառուցման փոխարեն լցվել է ավազե շերտ և ավազե շերտի վրա g/ավազային հարթեցուցիչ շերտով փակել, որը ուղղարկվել է փորձաքնեության: Փորձաքննության արդյունքներից պարզվել է, որ խարամաբետոնն շերտը բացակայում է, և g/ավազային հարթեցուցիչ շերտի ամրությունը չի համապատասխանում չափանիշներին:

2. Ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել է տեղադրել մետադապլաստե պատուհաններ սպիտակ 60մմ 4+4մմ ապակեփաթեթով արտերկիր, սակայն ստուգման ընթացքում հայնտաբերվել է, որ պատուհանները տեղական են և մինչ տեղադրելը պետք էր համաձայնեցվեր Պատվիրատուի հետ: Նշենք նաև, որ նախագծող կազմակերպությունները միավորի գները որոշելիս հիմնվում են ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող գնային տեղեկատվությունից, որում հստակ նշված է ատրերկրի և տեղական արտադրության միավորի գները:

3. Պատուհանների ամրությունը ստուգելու համար պատահականությամբ ընտրվել է պատուհանների փեղկերի լայնքերի մեջ ցինկապատ ներդիրները, որը տեղում բացակայել է:

*4. Նախատեսվել է պղնձե հաղորդալարեր տեղադրել բաժանիչ հիմքով հատվածքը 3*4մմ2 ՊՊՎ և 3*2,5մմ2 ՊՊՎ, որը տեղում կտրվել է և ուղղարկվել է*

*փորձաքննության: Փորձաքննության արդյունքից պարզվել է, որ 3*2,5մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1.31 մմ2-է, 3*4մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1,47մմ2-է և 3*2,54մմ2:*

5. Նախատեսվել է միջնորմերի իրականացում 10սմ և 20 սմ պեմզբլոկով միջնորմերով, սակայն սղուգման ընթացքում չափվել է և փեղում պարզվել է, որ միջնորմերը եղել են համապատասխանաբար 9,2 և 19սմ հաստությամբ հաշվի առնելով պեմզաբլոկների շեղումը, հետագայում կատարողական ակտերը ներկայացնելուց ծավալները հիմք ընդունել պեմզաբլոկների նշված հաստությամբ:

Ելնելով վերը թվարկված խախտումներից, փարձագիտական եզրակացությունից և հիմք ընդունելով 13 օգոստոսի 2019թ. N ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-19/1 պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի պահանջները Այնթապի համայնքապետարանը միակողմանի լուծել է պայմանագիրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք է տրվել ֆինանսների նախարարության կողմից 24.10.2019թ. թիվ 26/26-1/17423-2019թ.-ին տրամադրել է փաստաթղթերը ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձին, որպեսզի նախաձեռնի ընթացակարգ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձը ուսումնասիրելով առկա փաստաթղթերի հիմքերը, նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/180 ծածկագրով ընթացակարգը մերժվել է հետևյալ, պատճառաբանությամբ՝

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ կողմերի միջև կնքված թիվ «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ 19/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումը հանձնաժողովի կողմից հրապարկվել է տեղեկագրում՝ www. gnumner.am կայքում, «պայմանագրերում կատարված փոփոխություններ» բաժնում՝ «պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնի փոխարեն, վերնագրում նշելով՝ «ԱՍԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածակգրով պայմանագիրը լուծելու վերաբերյալ՝ թիվ «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ 19/1» ծածակագրի փոխարեն:

Տեղեկացնում ենք, որ Այնթապի համայնքապետարանը լիազորված չէ հարապարակել տեղեկագրում, որին հրապարակման իրավասու է Արարատի մարզպետարանը: Այնթապի համայնքապետարանը պատշաճ ձևով ծանուցումը էլեկտրոնային հասցեով տրամադրել է Արարատի մարզպետարանին, սակայն Արարատի

մարզպետարանը հրապարկել է տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, «պայմանագրերում կատարված փոփոխություններ» բաժնում՝ «պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնի փոխարեն, վերնագրում նշելով՝ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 019/1» ծածկագրով պայմանագիրը լուծելու վերաբերյալ՝ թիվ «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ 19/1» ծածկագրի փոխարեն: Այդ իսկ պատճառով Այնթապի համայնքապետարանի մեղավորության աստիճանը բացակայում է: Այնթապի համայնքապետարանը 29.11.2019թ.-ին Արարատի մարզպետարանին կրկին տրամադրել է ծանուցում և արդեն հրապարակված է «պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Վերը նշված տեղեկությունները հայտում են ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով կրկին ընթացք տալու վերաբերյալ:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Գրիտիգ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ «Գրիտիգ» ՍՊԸ-ին ներկայացված գրության, «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված փորձարկման արձանագրության, Այնթապի համայնքի ղեկավարի 08.10.2019 թվականի թիվ 36 կարգադրության և արձանագրության պատճենները:

3. <u>«Գրիտիգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.02.2020թ. գրությամբ դիմել է «Գրիտիգ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.02.2020թ. թիվ 26/26-1/20392-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2020/36 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ Արարատի մարզ Այնթապի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գրիտիգ» ՍՊԸ-ի միջև 16.08.2019թ.-ին կնքվել է թիվ «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

www.gnumner.am համացանցային կայքում 02.12.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Այնթապի համայնքապետարանի և «Գրիտիգ» ՍՊԸ-ի միջև 16 օգոստոսի 2019թ. N «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով պայմանագրի պետք է իրականացվեր ՀՀ Արարատի մարզի Այնթապ համայնքի մշակույթի տան կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը:

Համաձայն պայմանագրի՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բևեռագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, սակայն, «Գրիտիգ» ՍՊԸ-ին «Արտ Պլաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 02 հոկտեմբերի 2019 թվականի N 1 կատարողականի ակտը ստուգելու համար Այնթապի համայնքապետարանը սույն թվականի հոկտեմբերի 8-ի Այնթապ համայնքի ղեկավարի N 36 կարգադրության հիման վրա ստեղծել է հանձնաժողով, որով ստուգվել է Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքների թիվ 1 կատարողական ակտի աշխատանքների որակը:

Ստուգման ընթացքում հայտնաբերվել են, մի շարք բացթողումներ և խախտումներ, որն արձանագրվել է հանձնաժողովի անդամների և մասնակիցների կողմից:

Հայտնաբերվել են հետևյալ խախտումները՝

1. Նախատեսվել է հատակի խարամաբետոնե շերտի կառուցում 50 մմ հաստությամբ, սակայն ստուգման ընթացքում պարզվել է, որ տեղում առկա չէ, խարամաբետոնե շերտի կառուցման փոխարեն լցվել է ավազե շերտ և ավազե շերտի վրա g/ավազային հարթեցուցիչ շերտով փակել, որը ուղղարկվել է փորձաքննության: Փորձաքննության արդյունքներից պարզվել է, որ խարամաբետոնե շերտը բացակայում է, և g/ավազային հարթեցուցիչ շերտի ամրությունը չի համապատասխանում չափանիշներին:

2. Ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել է տեղադրել մետադապլաստե պատուհաններ սպիտակ 60մմ 4+4մմ ապակեփաթեթով արտերկիր, սակայն ստուգման ընթացքում հայտնաբերվել է, որ պատուհանները տեղական են և մինչ տեղադրելը պետք էր

համաձայնեցվեր Պատվիրատուի հետ: Նշենք նաև, որ նախագծող կազմակերպությունները միավորի գները որոշելիս հիմնվում են ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող գնային տեղեկատվությունից, որում հստակ նշված է ատրերկրի և տեղական արտադրության միավորի գները:

3. Պատուհանների ամրությունը ստուգելու համար պատահականությամբ ընտրվել է պատուհանների փեղկերի լայնքերի մեջ ցինկապատ ներդիրները, որը տեղում բացակայել է:

4. Նախատեսվել է պղնձե հաղորդալարեր տեղադրել բաժանիչ հիմքով հատվածքը 3*4 մմ2 ՊՊՎ և 3*2,5 մմ2 ՊՊՎ, որը տեղում կտրվել է և ուղղարկվել է փորձաքննության: Փորձաքննության արդյունքից պարզվել է, որ 3*2,5 մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1.31 մմ2-է, 3*4 մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1,47 մմ2- է և 3*2,54 մմ2:

5. Նախատեսվել է միջնորմերի իրականացում 10սմ և 20սմ պեմզբլոկով միջնորմերով, սակայն ստուգման ընթացքում չափվել է և տեղում պարզվել է, որ միջնորմերը եղել են համապատասխանաբար 9,2 և 19սմ հաստությամբ հաշվի առնելով պեմզաբլոկների շեղումը, հետագայում կատարողական ակտերը ներկայացնելուց ծավալները հիմք ընդունել պեմզաբլոկների նշված հաստությամբ:

Ելնելով վերը թվարկված խախտումներից, փարձագիտական եզրակացությունից և հիմք ընդունելով 13 օգոստոսի 2019թ. թիվ «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-19/1» պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի պահանջները Այնթապի համայնքապետարանը միակողմանի լուծել է պայմանագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում 02.12.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը հրապարակվել է «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

«Գրիտիգ» ՍՊԸ-ի և «Արտ Պլաս» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ 1 կատարողական ակտով (այսուհետ նաև՝ Կատարողական) կատարված աշխատանքների որակը ստուգելու համար Այնթապի համայնքապետարանը սույն թվականի հոկտեմբերի 8-ի Այնթապ համայնքի ղեկավարի թիվ 36 կարգադրության (այսուհետ նաև՝ Կարգադրություն) հիման վրա ստեղծել է հանձնաժողով: Կարգադրության հիման վրա Հանձնաժողովի նախագահ է սահմանվել Գ. Հովհաննիսյանը (համայնքի ղեկավարի տեղակալ), անդամներ են սահմանվել՝ Ա. Իսրայելյանը (Այնթապի համայնքապետարանի առաջատար մասնագետ 3.1-1), Գ. Ավագյանը (Այնթապի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ 3.2-2), Հ. Ադամյանը (Այնթապի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ 3.2-1), Ա.

Թորոսյանը (Այնթապ համայնքի բնակիչ), Ա. Աբելյանը (ինժեներ) և Խ. Այվազյանը (տեխնիկական հսկողություն, «Գրիտիգ» ՍՊԸ-ի տնօրեն):

Կատարողականով կատարված աշխատանքների որակի ստուգման արդյունքում 08.10.2019թ.-ին կազմված արձանագրությունը, որով նշվել են մի շարք անհամապատասխանություններ, կազմել և ստորագրվել է Ա. Իսրայելյանի, Գ. Ավագյանի և Հ. Ադամյանի կողմից:

14.10.2019թ.-ին «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ ՓԼ կողմից բետոնի ամրության փորձարկման, հատակի հարթեցման շերտից հորատած փորձանմուշների վերաբերյալ կազմված թիվ 01-3353 արձանագրության համաձայն՝ ծավալաթերթով նախատեսված B12.5 խարամաբետոնե 50մմ-անոց շերտը բացակայում է:

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ ՓԼ կողմից 10.10.2019թ.-ին պղնձե մալուխների վերաբերյալ կազմված թիվ 02-0860 արձանագրության համաձայն՝ ծավալաթերթով նախատեսված 3*2,5 մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1.31 մմ2 է, ծավալաթերթով նախատեսված 3*4 մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1,47 մմ2 և 3*2,54 մմ2 է:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.02.2020թ. թիվ 26/26-1/20392-2019 գրությամբ «Գրիտիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արարատի մարզի Այնթապ համայնքի մշակույթի տան կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ Արարատի մարզ Այնթապի համայնքապետարանի և «Գրիտիգ» ՍՊԸ-ի միջև 16.08.2019թ.-ին կնքված թիվ «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արարատի մարզի Այնթապ համայնքի մշակույթի տան կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

www.gnumner.am համացանցային կայքում 02.12.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Այնթապի համայնքապետարանի և «Գրիտիգ» ՍՊԸ-ի միջև 16 օգոստոսի 2019թ. N «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով պայմանագրի պետք է իրականացվեր ՀՀ Արարատի մարզի Այնթապ համայնքի մշակույթի տան կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը:

Համաձայն պայմանագրի՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բևութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, սակայն, «Գրիտիգ» ՍՊԸ-ին «Արտ Պլաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 02 հոկտեմբերի 2019 թվականի N 1 կատարողականի ակտը ստուգելու համար Այնթապի համայնքապետարանը սույն թվականի հոկտեմբերի 8-ի

Այնթապ համայնքի ղեկավարի N 36 կարգադրության հիման վրա ստեղծել է հանձնաժողով, որով ստուգվել է Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքների թիվ 1 կատարողական ակտի աշխատանքների որակը:

Ստուգման ընթացքում հայնտաբերվել են, մի շարք բացթողումներ և խախտումներ, որն արձանագրվել է հանձնաժողովի անդամների և մասնակիցների կողմից:

Հայտնաբերվել են հետևյալ խախտումները՝

1. Նախատեսվել է հատակի խարամաբետոնե շերտի կառուցում 50 մմ հաստությամբ, սակայն ստուգման ընթացքում պարզվել է, որ տեղում առկա չէ, խարամաբետոնե շերտի կառուցման փոխարեն լցվել է ավազե շերտ և ավազե շերտի վրա g/ավազային հարթեցուցիչ շերտով փակել, որը ուղղարկվել է փորձաքննության: Փորձաքննության արդյունքներից պարզվել է, որ խարամաբետոնե շերտը բացակայում է, և g/ավազային հարթեցուցիչ շերտի ամրությունը չի համապատասխանում չափանիշներին:

2. Ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել է տեղադրել մետադապլաստե պատուհաններ սպիտակ 60մմ 4+4մմ ապակեփաթեթով արտերկիր, սակայն ստուգման ընթացքում հայնտաբերվել է, որ պատուհանները տեղական են և մինչ տեղադրելը պետք էր համաձայնեցվեր Պատվիրատուի հետ: Նշենք նաև, որ նախագծող կազմակերպությունները միավորի գները որոշելիս հիմնվում են ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող գնային տեղեկատվությունից, որում հստակ նշված է ատրերկրի և տեղական արտադրության միավորի գները:

3. Պատուհանների ամրությունը ստուգելու համար պատահականությամբ ընտրվել է պատուհանների փեղկերի լայնքերի մեջ ցինկապատ ներդիրները, որը տեղում բացակայել է:

4. Նախատեսվել է պղնձե հաղորդալարեր տեղադրել բաժանիչ հիմքով հատվածքը 3*4 մմ2 ՊՊՎ և 3*2,5 մմ2 ՊՊՎ, որը տեղում կտրվել է և ուղղարկվել է փորձաքննության: Փորձաքննության արդյունքից պարզվել է, որ 3*2,5 մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1.31 մմ2-է, 3*4 մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1,47 մմ2- է և 3*2,54 մմ2:

5. Նախատեսվել է միջնորմերի իրականացում 10սմ և 20սմ պեմզբլոկով միջնորմերով, սակայն ստուգման ընթացքում չափվել է և տեղում պարզվել է, որ միջնորմերը եղել են համապատասխանաբար 9,2 և 19սմ հաստությամբ հաշվի առնելով պեմզաբլոկների շեղումը, հետագայում կատարողական ակտերը ներկայացնելուց ծավալները հիմք ընդունել պեմզաբլոկների նշված հաստությամբ:

Ելնելով վերը թվարկված խախտումներից, փարձագիտական եզրակացությունից և հիմք ընդունելով 13 օգոստոսի 2019թ. թիվ «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-19/1» պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի պահանջները Այնթապի համայնքապետարանը միակողմանի լուծել է պայմանագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում 02.12.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը հրապարակվել է «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

«Գրիտիգ» ՍՊԸ-ի և «Արտ Պլաս» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ 1 կատարողական ակտով (այսուհետ նաև՝ Կատարողական) կատարված աշխատանքների որակը ստուգելու համար Այնթապի համայնքապետարանը սույն թվականի հոկտեմբերի 8-ի Այնթապ համայնքի ղեկավարի թիվ 36 կարգադրության հիման վրա ստեղծել է հանձնաժողով: Կարգադրության հիման վրա Հանձնաժողովի նախագահ է սահմանվել Գ. Հովհաննիսյանը (համայնքի ղեկավարի տեղակալ), անդամներ են սահմանվել՝ Ա. Իսրայելյանը (Այնթապի համայնքապետարանի առաջատար մասնագետ 3.1-1), Գ. Ավագյանը (Այնթապի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ 3.2-2), Հ. Ադամյանը (Այնթապի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ 3.2-1), Ա. Թորոսյանը (Այնթապ համայնքի բնակիչ), Ա. Աբելյանը (ինժեներ) և Խ. Այվազյանը (տեխնիկական հսկողություն, «Գրիտիգ» ՍՊԸ-ի տնօրեն):

Կատարողականով կատարված աշխատանքների որակի ստուգման արդյունքում 08.10.2019թ.-ին կազմված արձանագրությունը, որով նշվել են մի շարք անհամապատասխանություններ, կազմել և ստորագրվել է Ա. Իսրայելյանի, Գ. Ավագյանի և Հ. Ադամյանի կողմից:

14.10.2019թ.-ին «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ ՓԼ կողմից բետոնի ամրության փորձարկման, հատակի հարթեցման շերտից հորատած փորձանմուշների վերաբերյալ կազմված թիվ 01-3353 արձանագրության համաձայն՝ ծավալաթերթով նախատեսված B12.5 խարամաբետոնե 50մմ-անոց շերտը բացակայում է:

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ ՓԼ կողմից 10.10.2019թ.-ին պղնձե մալուխների վերաբերյալ կազմված թիվ 02-0860 արձանագրության համաձայն՝ ծավալաթերթով նախատեսված 3*2,5 մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1.31 մմ2 է, ծավալաթերթով նախատեսված 3*4 մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1,47 մմ2 և 3*2,54 մմ2 է:

Սույն գործի փաստերի, մասնավորապես՝ «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ ՓԼ կողմից 10.10.2019թ.-ին պղնձե մալուխների վերաբերյալ կազմված թիվ 02-0860 և 14.10.2019թ.-ին

բետոնի ամրության փորձարկման, հատակի հարթեցման շերտից հորատած փորձանմուշների վերաբերյալ կազմված թիվ 01-3353 արձանագրությունների հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակիցը էականորեն խախտել է պայմանագիրը, քանի որ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գրիտիգ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ մատուցված ծառայությունը չի

համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.02.2020թ. թիվ 26/26-1/20392-2019 գրությամբ «Գրիտիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/36 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գրիտիգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**